39. ԱՔԱԲ ԹԱԳԱՎՈՐ

Ժամանակին Աքաբ թագավորը Արգյուլ Ազիզի ախչիկը ուզեց։ Արգյուլ Ազիզ թագավորը թաքլիֆաթ[1] էրավ Աքաբ թագավորին, թե օր հավքի օսկոռով երկինքը սարայի մի կու շինե, ախչիկը կուտա, թե չի շինե, չի տա։

Աքաբ թագավորը հրաման էրավ, հավքերը բոլորը էկան իրեն դիվանը կայնան։ Աքաբ թագավորը հարցրեց.— Ես ձեզի ինչի՞ եմ կանչել։

Հեչ մեկեն խոսքըմ չէզավ։ Սու-Թավուղի կար, ըսավ.— Ձենք գիտեր, ինչի՞ կանչել ես։

Աքաբ թագավոր կ'ըսե.— Ես Արգյուլ Ազիզի թագավորի ախչիկը ուզեցի, էնիկ ինձի թաքլիֆաթըմ էրավ. «Թե հավքի օնկռներով երկինքը սարայի մի կու շինես, ախչիկս կուտամ», ես ձեզի կանչեր եմ օր ձեզի բոլոր շարթեմ, ձեր օսկրռներով սարայի մի պիտի շինեմ։

Սու-Թավուղին ըսավ.— Ինչպես օր դու մարթոց մեջ թագավոր մ'ես, Աքա՛բ, մենք էլ ունինք մեզի համար թագավոր։

Թագավորը ըսավ.— Ձեր թագավորը վո՞վ է։

Ըսավ.— Զումրութի Անղան է, մենք պիտի էրթանք իրեն տանըշմիշ ըլլինք։

Թագավորն ըսավ.— Ձեզի էրթալ պետքություն չունի։

---

[1] Առաջարկ (Ե. Բ.)։

Հավքերու մեջ արծիվ կային, ամեքն ուժով, Աքաբ թագավոր հրաման էրավ թե՝ գնացեք Զումրութի Անղուն բերեք։

Արծիվները քնացին, Զումրութի Անղան թևերու տակը անցան բերին, թագավորի դիվանը կայնեցուցին։

Աքաբ թագավոր Զումրութի Անղային ըսավ.— Էկա՛ր, բարով էկար, հիմա ես կու խոսիմ, պատասխանը տուր։ Ես Աբգյուլ Ազիզի ախչիկը ուզեցի, թաքլիֆաթ մի էրավ, ըսավ թե. «Հավքի օսկրոնեբով երկինքը սարայի մի շինե, ախչիկս տամ», ես հավքեր հիմա հավաքել եմ օր մորթեմ, օսկրոներով սարայի մի շինեմ։

Զումրութի Անղանը ըսավ.— Թագավոր ապրած մնա, ես իրեք խոսք ունիմ խոսելու, հրաման էրա խոսիմ։

Աքաբն ըսավ.— Քեզ հրաման, խոսե։

Զումրութի Անղան ըսավ.— Ես օր հինգ հարուր տարի էղա, ուզեցի աշխարհը հ'մեն սիյաթ էնել[1] պտտեցի, շատ վեր եմ ելել, տեսա օր աշխարքի մեջը մե բանըմ կու պլպլա, ըսի՝ իշնեմ այեմ, թե էդ պլպլանը ինչ է, իշա օր մեկ օսկիե շինված աշտարակըմ, մեջը շատ մարթիկներ կար, աշտարակի քումբեթի վրա ես է կայնա, մարթասներ էդ աշտարակեն դուրս էկան՝ տեսան օր ես աշտարակի գլոխ կայնել եմ, ելնող մարթը ըսավ. «Էս ինչ լավ հավք է, մենք էսման հավք տեսած չէինք, կարելի է օր թե էնի մեզեն բանըմ կուզե, բերեք դեվեմ մորթեք թող ուտե»։ Մարթիկ դեվեն մորթեցին, իշա գեվեի միս կերա ու էկա յուվես նստա։ Հինգ հարուր տարի գենա անցավ տարին. ուզեցի օր մեմե աշխարհը սիյաթ էնեմ։ Ելա, շատ վեր ելել եմ, տեսա օր աշխըրքի մեջ մե բանըմ կը պլպլա, ըսի՝ իշնիմ այիմ էդ պլպլան ի՞նչ է։ Իշա օր գենա էդ աշտարակը, հիմա էղել է քյուլի արծաթ։ Ես աշտարակի վրեն նստա, տեսա մարթիկներ դուրս էկան, ըսին. «Էդման հավք տեսած չէինք, ինչ լավ հավք մ'ե»։ Բերին մե խոչըմ մորթեցին, իշա խոչը կերա, ելա էկա յուվես նստա։ Հինգ հարուր տարի գենա ընցավ, ուզեցի օր աշխարքը մեմե սիյաթ էնեմ. ելա վեր, շատ ելա, աշխարքը տեսա օր մե բանըմ կը պլպլա գու, ըսի՝ իշնիմ այիմ տեսնիմ էդ պլպլանը ի՞նչ է։ Իշա տեսա օր գենա էն աշտարակը, տեսա օր աշտարակը զուտ թուշ է էղել։ Ես աշտարակի գլոխը նստել էի, աշտարակեն մարթիկներ դուրս էկան, դուրս էկան տեսան օր հավքըմ աշտարակի գլոխ նստել է, մեկը մեկուն ըսավ թե. «Օխը բերեք», մեկը ըսավ. «Թվանքը բերեք», մեկը ըսավ. «Թընթանոց բերեք հավքը զարդենք»։ Թողի ու փախա, էկա յուվես

[1] Շրջակայել (Ս. Բ.)։

նստա։ Ես էկա յուվես նստա քու մարթիքը էկան ինձի բերին։ Հիմա Աքա՛բ թագավոր, լսեցի՞ր, օսկին արծաթ էղավ, արծաթը թուչ էղավ, ինսան էլ փիչ էղավ, ախղանըն թուչի, ինսանը փիչի։ Ես հիմա կ՚ըսեմ օր օսկին արծաթ էղավ, արծաթը թուչ էղավ, քու ասած շատ չէ, գու էսքան հոգևոր մարթկանցը պիտի սըպանիս մեկ ախչըկամ համար[1]։

Աքաբ թագավորը թախտի վրա ետ ընկավ, մտածեց, մտածեց, օր ուր բանը կռապաշտի բան է, Զումրութի Անղալին ըսավ.— Դուք հավքեր, ոլորովդ ազատ եք, ես ձեզի աֆ էրի։

Ինունք հասան իրենց մուրադին։ Դուք էլ հասնիք ձեր մուրադին։

---

[1] Բնագրում՝ համար բառից հետո՝ «շատ չեմ տեսնի» (Ս. Կ.)։